ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2022թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Գայանե Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:
2. Ընթացիկ հարցեր/ հերթապահություն, կարգապահություն/:

1.Լսեցին.- Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ ծնողական խորհրդի նախագահ Սյուզաննա Գինոսյանը նշելով, որ վերջին շրջանում աշակերտներն անընդհատ հանդես են եկել էքսկուրսիա կազմակերպելու առաջարկներով: Նա առաջարկեց քաղաքային էքսկուրսիա կազմակերպել դեպի Երևան՝ այցելելով Մոսկվա կինոթատրոն և Պլանետարիում: Դասղեկը և բոլոր ծնողները հավանություն տվեցին առաջարկին: Ծնողներից Հարությունյան Գայանեն նշեց , որ նախապես հետաքրքրվել է տոմսերի արժեքներով և հայտնի է, որ կինոթատրոնի և Պլանետարիումի տոմսերն արժեն 1000-ական դրամ:Տրանսպորտի համար 1000-ական դրամ և սննդի կազմակերպման համար 2000: Բոլոր ներկա ծնողները հավանություն տվեցին առաջարկին:

Որոշեցին.- Հավաքել 5000 դրամ և այդ գումարի մեջ տեղավորել բոլոր ծախսերը:

2000- տոմսեր
1000/տրանսպորտ/
2000 /սնունդ/

Գումարը կհավաքի ծնողական խորհրդի նախագահը և վերջում հաշվետվություն կներկայացնի կատարված ծախսերի վերաբերյալ:

2. Լսեցին. - Ընթացիկ հարցեր/ հերթապահություն, կարգապահություն/:

Ելույթ ունեցավ դասղեկը՝ ներկայացնելով երեխաների սանիտարական վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հագախումների նկատմամբ: Դասղեկը հորդորեց, որ ծնողներն ավելի ուշադիր լինեն իրենց երեխաների ուսման հարցում, քանի որ ուսման առաջադիմության մեծ անկում է նկատվում և ուսուցիչները բարձրաձայնում են այս կարևոր խնդրի վերաբերյալ: : Դասարանում կան նոր առաջացած կարգապահական խնդիրներ, հիմնականում տղաների պահվածքի հետ կապված: Պետք է Պահեն ծնող-դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.-Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հագախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Սյուզաննա Գինոսյան
Քարտուղար՝ Հարությունյան Գայանե